# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 67-Ա

### ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների,

1.Հաստատել Բաղրամյան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի՝ թիվ 8 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի ։

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից ։

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնքի ավագանու
2022 թվականի հուլիսի 26–ի
N 67 -Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

1. Բաղրամյան համայնքի 2022 թվականի առաջին նստաշրջանի թիվ 8 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

Զեկ Շ.Առաքելյան

2" Բաղրամյան համայնքի 2022 թվականի մայիսի 17-ին կայացաց թիվ 5 ավագանու նիստի 54-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Զեկ Շ.Առաքելյան

3" Բաղրամյան Համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի հաստատման մասին

Զեկ Շ.Առաքելյան

4" Սոցիալական օգնություն հատկացնելու մասին

Զեկ Մ.Հարթենյան

5. Բաղրամյան Համյանքի պաշտոնական համացանցային կայքի վարման կարգը հաստատելու մասին

Զեկ. Ա.Խարչատրյան

6. Բաղրամյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին

Զեկ Շ.Առաքելյան

7. Բաղրամյան Համյնքի հրատապ ծրագրերի հաստատման մասին

Զեկ. Շ.Առաքելյան

8.Բաղրամյան համայնքի հողային հաշվեկշիռին համաձայնություն տալու մասին

Զեկ. Շ.Առաքելյան

9.Բաղրամյան համայնքի Հուշակերտ բնակավայրի սեփականության իրավունքով

համայնքային գյուղ նշանակության հողամասի աճուրդային կարգով օտարելու մասին

Զեկ Շ.Առաքելյան

10.Հողատեսքի նպատակային և գործառնական տեսքի փոփոխության մասին

/ԱԳՐՈՀԱՐՎԵՐՏՍ/

Զեկ Ա,Գրիգորյան

11.Բաղրամյան համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 07-ի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին

Զեկ Ա.Գրիգորյան

12. Բաղրամյան համայնքի Բաղրամյան բնակավայրի սեփականության իրավունքով

համայնքային գյուղ նշանակության հողամասերի աճուրդային կարգով օտարելու մասին:

Զեկ Շ.Առաքելյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 68-Ա

### ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ 54-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42–րդ մասով և «Նորմատիվ ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1–ի մասի 1-ի կետով

1. Բաղրամյան համայնքի ավագանու 2022թվականի մայիսի 17–ի 54–Ա որոշման մեջ կատարել հետևյալ լարացումն ու փոփոխությունը մասնավորապես՝ 4–րդ կետի « ՀՀ դրամ» բառերից առաջ ավելացնել «931.500 (ինը հարյութ երեսունմեկ հազար հինգ հարյուր)» բառերը:

2. Բաղրամյան համայնքի ավագանու 2022թվականի մայիսի 17–ի 54–Ա որոշման մեջ կատարել հետևյալ լարացումն ու փոփոխությունը մասնավորապես՝ 4–րդ կետի Լոտ 1,Լոտ 2, Լոտ 4,Լոտ 5 նկարագրությունների մեջ« բնակավայրիայլհողեր» բառերը փոխարինել « գյուղատնտեսական նշանակության արոտավայր» բառերով:

3. Բաղրամյան համայնքի ավագանու 2022թվականի մայիսի 17–ի 54–Ա որոշման մեջ կատարել հետևյալ լարացումն ու փոփոխությունը մասնավորապես՝ 4–րդ կետի Լոտ 3-ի նկարագրության մեջ « բնակավայրիայլհողեր» բառերը փոխարինել «գյուղատնտեսական նշանակության այլ հողեր» բառերով:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 69-Ա

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ 37- Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒՓՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.Բաղրամյան Համայնքի ավագանու 11,04,2022 թվականի 37-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Արմավիրի Մարզի Բաղրամյան համայնքի ավագանու
2022 թվականի հուլիսի 26-ի
N 69 -Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԱՎԱԳՆՈՒ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՄԲ 11.04.2022Թ.

## Բովանդակություն

ԿԱԶՄԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԸ


Ներածություն

1. Համայնքի տեսլականը ԵՎ ոլորտային նպատակները
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
3. Համայնքի 2022 թ. ծրագրերի ցանկը Եվ տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)
4. Համայնքի ՏԱՊ-ի ծրագրեր, որոնք ապահովված են ֆինանսական միջոցներով
5. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ
6. Համայնքային գույքի կառավարման 2022 թ. ծրագիրը
7. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ (ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԼՐԱՑՎԻ ՏԱՐԵՎԵՐՋԻՆ)

# Ներածություն

ՏԱՊ-ը տեղական ժողովրդավարության զարգացման, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ծրագրային և ֆինանսական կառավարման, ինչպես նաև համայնքը արտաքին աշխարհին ներկայացնելու գործող հիմնական ծրագրային փաստաթուղթն է: Համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար նախատեսված ներդրումային (մարդկային, ֆինանսական, գույքային և տեխնիկական) ռեսուրսները ճշգրտվում և պլանավորվում են ՏԱՊ-ում արտացոլված նպատակների, խնդիրների, մուտքային և ելքային ստույգ հաշվարկների ու արդյունքային ցուցանիշների, ինչպես նաև մոնիթորինգի և գնահատման համակարգի թելադրանքով:

Բաղրամյան համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- համակարգել համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու տվյալ տարվա անելիքները, պատասխանատուները և ժամկետները:
- համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ:
- որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

**Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները**

Բաղրամյանի բարեկարգ համայնք է՝ հագեցած ժամանակակից ենթակառուցվածքներով: Գյուղային համայնքում գործում են փոքր և միջին բիզնեսով զբաղվող բազմաթիվ արտադրական և սպասարկման ծառայություններ իրականացնող ձեռնարկություններ: Համայնքի բնակչությանը մատուցվում են բարձրակարգ հանրային ծառայություններ, իսկ բնակիչները ձևավորել են ամուր քաղաքացիական հասարակություն: Բաղրամյանի համայնքի տեսլականն է՝ համայնքը դարձնել գյուղմթերքների վերամշակման և արդյունաբերական տարածաշրջանային կենտրոն. ձևավորել բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, գրավիչ, բարեկարգ և մաքուր բնակավայր: Համայնքի զարգացման հիմնական նպատակներն են՝

- Համայնքի բնակչության գործազրկության մակարդակի նվազեցում՝ խթանելով գյուղմթերքի վերամշակման և արդյունաբերական ձեռնարկությունների վերագործակցման հնարավորությունները:
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման, մասնակցության կարգի մշակման և ընդունման, մասնակցության մեթոդների և ձևերի աստիճանական զարգացման միջոցով:
- Բաղրամյան գյուղին միացած թվով տասնչորս համայնքներում ապահովել բոլոր նախապայմանները՝ բնակիչների համար բարեկեցիկ միջավայր ստեղծելու համար:

## ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆ ԳՈՅԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Համայնքի 2022թ. բյուջեի կանխատեսվող մուտքերը → 610110,4 հազար ՀՀ դրամ

Սեփական եկամուտներ 211082,5 հազար ՀՀ դրամ
Անշարժ գույքի հարկ 88367,5հազար ՀՀ դրամ
Փոխադրամիջոցների գույքահարկ 71022,0 հազար ՀՀ դրամ
Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքերը նախատեսվել է 2103,0 հազար ՀՀ դրամ
Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարների գծով՝ պետական տուրք նախատեսվել է 1500,0 հազար ՀՀ դրամ՝ հիմք նոտարի և ՔԿԱԳ-ի կողմից տարված կանխատեսման հաշվարկները:
Պաշտոնական դրամաշնորհի, որից համահարթեցման դոտացիա 399027,9 հազար ՀՀ դրամ՝ հիմք « 2022թ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը և նպատակային հատկացումներ : Այլ եկամուտների գծով նախատեսվել է36090,0 հազար ՀՀ դրամ
Հողի հարկի ապառք 12000,0 հազար ՀՀ դրամ

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու բաժին | Պատասխանատու անձ |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Ավազանու նիստերի նախապատրաստում և անցկացում՝ ավազանու կանոնակարգին համաձայն: | Նստաշրջանով՝ փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթի և սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին: Նստաշրջանի ընթացքում՝ յուրաքանչյուր ամիս առնվազն 1 նիստ: Արտահերթի դեպքում՝ ըստ անհրաժեշտության: | Աշխատակազմի քարտուղար | Ա. Խաչատրյան |
| 2 | Ավազանու կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպում: | Տարվա ընթացքում | Ավազանի | |
| 3 | Համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների նախապատրաստում: Աշխատակազմի քարտուղարի հրամանների նախապատրաստում: | Տարվա ընթացքում | Իրավաբանական բաժին, Բաժինների պետեր | |
| 4 | Համայնքի ղեկավարի, տեղակալների, խորհրդականի և աշխատակազմի քարտուղարի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպում և անցկացում: | Յուրաքանչյուր շաբաթվա երեքշաբթի օրը, ժամը 14:00-16:00 | Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին | Հ. Հարությունյան |
| 5 | Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքին | 6 ամիսը մեկ անգամ | Աշխատակազմի քարտուղար, բաժինների պետեր | Ա.Խաչատրյան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համապատասխան հաշվետվությունների ներկայացում և ամփոփում: | | | |
| 6 | Համայնքային ծառայության թափուր հաստիքների մրցույթների և ատեստացիաների կազմակերպում: | Տարվա ընթացքում, ըստ անհրաժեշտությ ան: | Աշխատակազմ | Ա.Խաչատրյան |
| 7 | Բյուջեի եկամուտների հավաքագրման հետ կապված աշխատաժողովներ: | Պարբերաբար | Վարչական ղեկավարներ, համապատասխան բաժիններ | Հ. Ավետիսյան Ա.Կարապետյ ան |
| 8 | Վարչական վարույթների և վարչական պատասխանատվության հետ կապված գործերի վարում: | Տարվա ընթացքում | Իրավաբանական բաժին | |
| 9 | Համայնքապետարանում տարվող փաստաթղթաշրջանառու թյան աշխատանքների կազմակերպում: | Տարվա ընթացքում | Վարչական ղեկավարներ Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին | Հ. Հարությունյան |
| 10 | Հանրային լսումների կազմակերպում և անցկացում: | Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտությ ան | Աշխատակազմի քարտուղար | Ա. Խաչատրյան |
| 11 | Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդների և մրցույթների կազմակերպում: | Տարվա ընթացքում | Իրավաբանական բաժին, Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժին | |
| 12 | Համայնքապետարանի աշխատակազմի կարիքների համար գնումների գործընթացի կազմակերպում | Տարվա ընթացքում | Գնումների պատասխանատու ստորաբաժանում | Ջ. Մկրտումյան |
| 13 | Աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունների կատարման ապահովում | Տարվա ընթացքում | Ֆինանսատնտեսագիտա կան բաժին | Ա. Կարապետյան |
| 14 | Գույքահարկի, հողի հարկի բազաների վարման, համայնքի գույքի | Տարվա ընթացքում | Գույքահարկի հաշվառման, | Ա. Կարապետյան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հաշվառման, աշխատանքների կազմակերպում | | սպասարկման և հավաքագրման բաժին | |
| 15 | Համայնքի քաղաքաշինական գործունեության կազմակերպում և վերահսկում: | Տարվա ընթացքում | Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժին | Ա.Գրիգորյան |
| 16 | Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, արտաքին գովազդի տեղադրման մանրածախ և բացօթյա վաճառքի և այլ թույլտվությունների տրամադրման ապահովում: Մասնակցություն համայնքի տարածքում հաստատված երթուղիների մրցույթների կազմակերպմանը: | Տարվա ընթացքում | Վարչական ղեկավարներ Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժին, | Ա.Գրիգորյան |
| 17 | Համայնքի կողմից իրականացվող ծրագրերի(սուբվենցիոն և այլ) աշխատանքների կազմակերպում: | Տարվա ընթացքում | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | Լ. Գասպարյան |
| 18 | Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների, քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների հետ կապված հարաբերությունների իրականացմանն ուղղված գործընթացներում օրանականության ապահովում: | Տարվա ընթացքում | Վարչական ղեկավարներ Իրավաբանական բաժին | |
| 19 | Համայնքի տարածքում նախադպրոցական կրթության, արտադպրոցական դաստիարակության, մշակույթի սպորտի և երիտասարդության հետ կապված հարցերի իրականացում: | Տարվա ընթացքում | Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին | Մ. Հարթենյան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20 | Համայնքի տարածքում խնամակալության և հոգաբարձության հետ կապված հարաբերությունների կարգավորում: | Տարվա ընթացքում | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով | Հ.Մադոյան |
| 21 | Համայնքապետարանի կողմից սոցիալական ոլորտում մատուցվող աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | Սոցիալական աշխատող Սոց. անապահով խավերի կողմից ներկայացվող դիմումներն ուսումնասիրող հանձնաժողով: | Ա. Խաչատրյան |
| 22 | Արտասահմանյան քաղաքների հետ բարեկամական կապերի հաստատման և զարգացման աշխատանքների իրականացում: | Տարվա ընթացքում | | Լ.Գասպարյան |
| 23 | Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների իրականացում | Տարվա ընթացքում | Իրավաբանական բաժին բաժին | |
| 24 | Գյուղատնտեսության ոլորտի հետ կապված աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | Աշխատակազմի մասնագետ | Ա. Դավթյան |
| 25 | Առողջապահության ոլորտի հետ կապված աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | Աշխատակազմի մասնագետ | |
| 25 | Պաշտպանության ոլորտի հետ կապված աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | Աշխատակազմի մասնագետ | Ս.Պողոսյան |
| 25 | Աշխատակազմի տեխնիկական սպասարկման հետ կապված աշխատանքների իրականացում | Տարվա ընթացքում | | Ա. Մկրտչյան |

Աղյուսակ 2.Համայնքի ոլորտային նպատակները

| Ոլորտային նպատակ | Վերջնական արդյունքի ցուցանիշ |
|---|---|
| Ոլորտ 1. Ընդհանուր | |
| ●Ապահովել տեղական ինքնակառավարման իրականացումը Բաղրամյանի համայնքում, ունենալ բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցման արդյունավետ, մասնագիտացված, նպատակային և թափանցիկ համակարգ: ●Ստեղծել բարեկարգ ու զարգացած ենթակառուցվածքներով համայնք բնակիչների համար: | Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից: Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների կազմում, |
| Ոլորտ 2.Շրջակա միջավայրի պաշտպանություն | - |
| ●Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումը և չեզոքացումը, ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ | Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացումը (հարցումների հիման վրա), %-ով |
| Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում | - |
| 2022 թվականին արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ նախատեսվում են. այն է՝ | - |

| | |
|---|---|
| ●Բաղրամյանի համայնքապետարանի ղեկավար կազմի, աշխատակազմի մասնագետների ինչպես նաև ենթակա կառույցների աշխատակիցների մասնակցությունը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության <<Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա>> ՊՈԱԿ-ում կազմակերպված դասարնթացներին: | |
| **Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն** | |
| ● Հիմնանորոգել և բարեկարգել ներհամայնքային ճանապարհները:<br>● Իրականացնել գյուղական բնակավայրերի խմելու ջրի և ոռոգման համակարգերի բարելավման աշխատանքներ:<br>● Իրականացնել փողոցների գիշերային լուսավորության ցանցի և բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների, բակային տարածքների, մանկական խաղահրապարակների կառուցման և նորոգման աշխատանքներ:<br>● Իրականացնել համայնքի սանիտարական մաքրմանը և աղբահանությանը վերաբերող բարեփոխումներ:<br>● Համալրել գոյություն ունեցող ավտոպարկը նոր տեխնիկայով՝ հաշվի առնելով խոշորացված համայնքի աղբահանության ծավալները:<br>● Շարունակել համայնքի տարածքում աղբամանների տեղադրման աշխատանքները:<br>● Կանոնակարգել աղբավայրերի շահագործման աշխատանքները՝ ելնելով բնակավայրի դիրքից և բնապահպանական պահանջներից: | Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից: |
| **Ոլորտ 5. Տրանսպորտ, առևտուր, սպասարկում** | |
| ● Ապահովել ներհամայնքային երթուղիների կանոնավոր սպասարկումը՝ ելնելով բնակավայրերի առանձնահատկություններից:<br>● Կահավորել ներհամայնքային ճանապարհները ճանապարհային նշաններով, գծանշումներով և տրանսպորտային լուսաֆորներով, կանգառներով և սպասարահներով:<br>● Նպաստել առևտրի և սպասարկման կետերի ստեղծմանը՝ կանոնակարգված առևտուր և սպասարկում իրականացնելու նպատակով: | Բարեկարգ ներբնակավայրային փողոցների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում: |
| **Ոլորտ 6. Կրթություն** | |

| | |
|---|---|
| ● Ապահովել համայնքում կրթական ծառայությունների արդյունավետ մատուցումը:<br>● Աջակցել համայնքում նոր մանկապարտեզների կառուցմանը, վերանորոգել գոյություն ունեցող մանկապարտեզները, ավելացնել մանկապարտեզներում խմբերի թիվը:<br>● Իրականացնել նախադպրոցական կրթության որակի բարելաման և մատչելիության ապահովման աշխատանքներ: | Համանքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում:<br>Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից:<br>Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին:<br>Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ: |
| Ոլորտ 7. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ | |
| ●Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը՝ մշակույթի և երիտասարդության հետ տարվող որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:<br>● Հիմնանորոգել համայնքի մշակութային օբյեկտները՝ համալրելով նոր գույքով:<br>● Ակտիվացնել մշակութային ծրագրերի միջոցառումներին ուղղված աշխատանքները: | Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակավայրերի բնակիչներին, գրադարանից օգտվողների թվի տարեկան աճը,<br>համայնքում մշակութային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռը դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ: |
| Ոլորտ 8. Սպորտ | |

| | |
|---|---|
| • Ապահովել Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում որակյալ ծառայությունների մատուցումը:<br>• Կազմակերպել ներհամայնքային մարզական միջոցառումներ:<br>Ընդլայնել մարզադպրոցներում գործող խմբերի քանակները:<br>• Բարելավել մարզադպրոցների շենքային պայմանները, նորացնել մարզական գույքը: | Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը համապատասխան տարիքի երեխաների թվի կազմում:<br>Մատուցվող մարզական ծառայությունների մատչելիությունը բնակավայրերի բնակիչներին,: |
| Ոլորտ 9.Սոցիալական պաշտպանություն | |
| • Օգնել համայնքի անապահով, բազմազավակ, պատերազմում զոհվածների և վիրավորների ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցներին, բարելավել նրանց սոցիալական վիճակը:<br>• Համագործակցել տարբեր հասարակական կազմակերպությունների հետ՝ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների որակը բարելավելու նպատակով: | Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրերից: |
| Ոլորտ 10. Գյուղատնտեսություն | |
| •Աջակցել գյուղատնտեսական նոր տեխնոլոգիաների ներդրմանը համայնքում:<br>• Խթանել գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանը համայնքում:<br>• Աջակցել գյուղմթերքի իրացմանը և վերամշակող արտադրությունների ստեղծմանը:<br>• Աջակցել գյուղոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: | Գյուղական համայնքների բնակիչների համար շոշափելի աջակցությունը Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից: |
| Ոլորտ 11. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն | |
| 2022 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ապահովում: | Հանրային քննարկումներ, բաց լսումներ, ընդունելությունների կազմակերպում, ինչպես նաև ավագանու նիստերին բնակիչների մասնակցություն: |
| Ոլորտ 12. ՏԻՄ-երի կողմից Պաշտպանության ոլորտի հետ կապված աշխատանքների կազմակերպում և իրականացում | |
| 2022 թվականի ընթացքում Զինկոմիսարիատի հետ համագործակցված համապատասխան աշխատանքների իրականացում: | Օրենքով սահմանված և վերապահված լիազորությունների իրականացում: |

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) | Ծրագրի ֆինանսավոր-ման աղբյուրը |
|---|---|---|---|
| Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | | | Համայնքի բյուջե |
| 1. | <<Օրենսդիր և գործադիր մարմիններ>> ծրագիր<br>.Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ ծրագիր<br>.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ծրագիր | 265182.0<br>1700.0<br>7700.0 | |
| Ընդամենը | | 274582.0 | |
| Ոլորտ 2. Շրջակա միջավայրի պաշտպանություն | | | Համայնքի բյուջե |
| 1. | Աղբահանում | 22500.0 | |
| Ընդամենը | | 22500.0 | |
| Ոլորտ 3. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | | | Համայնքի բյուջե |
| 1. | <<Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ>> (այլ դասերին չպատկանող) | 45600 | |
| 2. | <<Փողոցների լուսավորություն>> | 7232.0 | |
| 3. | <<Ջրամատակարարում>> | 124245.0 | |
| Ընդամենը | | 177077.0 | |
| Ոլորտ 4. Տնտեսական հարաբերություններ | | | Համայնքի բյուջե |
| 1. | Ճանապարհային տրանսպորտ ծրագիր՝ ճանապարհների ընթացիկ նորոգում, նշագծում | 122900.0 | |
| 2. | Ոռոգում | 31000 | |
| 3. | Գյուղատնտեսություն | 5748.0 | |
| 4. | Նավթամթերք և բնական գազ | 16600.0 | |
| 5. | Էներգետիկա | 15300.0 | |
| Ընդամենը | | 17383.0 | |
| Ոլորտ 5.Կրթություն | | | Համայնքի բյուջե |
| 1. | Նախադպրոցական կրթության կազմակերպում | 132600.0 | |
| 2. | Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում | 17000.0 | |
| 3. | Միջնակարգ ընդհանուր կրթություն | 1700.0 | |

| | | | |
|---|---|---|---|
| Ընդամենը | | 117700.0 | |
| **Ոլորտ 6. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ** | | | Համայնքի բյուջե |
| 1. | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ ծրագրիր | 27156.0 | |
| 2. | Գրադարաններ ծրագրով | 4800,0 | |
| 3. | Այլ մշակույթային կազմակերպություն | 7000.0 | |
| Ընդամենը | | 40356.0 | |
| **Ոլորտ 7.Սոցիալական պաշտպանություն** | | | Համայնքի բյուջե |
| 1. | <<Սոցալական հատուկ արտոնություններ>> ծրագիր, որում ընդգրկված են՝ Թաղման ծախսերի մասնակի հատուցման համար, սոցիալապես անապահով խավերին մասնակի օգնություններ տրամադրելու համար՝ համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով: | 20000,0 | |
| Ընդամենը | | 20000.0 | |
| **Ոլորտ 8. ՀՀ համայնքների պահուստային ֆոնդեր** | | | Համայնքի բյուջե |
| 1, | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդեր | 10102.0 | |
| Ընդամենը | | 10102.0 | |
| Որից 9. Առողջապահություն | | | |
| 1. | Հանրային առեղջապահության ծառայությու | 1200.0 | |
| Ընդամենը | | 1200.0 | |

## Աղյուսակ 4. Կապիտալ ծախսեր

| Հոդված | Ծախսի անվանումը | Կապալառու | Կիսամյակ | Ինն ամիս | Տարեկան |
|---|---|---|---|---|---|
| 5122 | Վարչական սարքավորումներ | | *3500,0* | 4000,0 | 12000,0 |
| 5121 | Մեքենաների ձեռք բերումտրանսպորտային սարքավորումներ | | 6000,0 | 10000,0 | 10000,0 |
| 5134 | Նախագծահետազոտական ծախսեր | | 500,0 | 6800,0 | 6800,0 |
| 8411 | Հողի իրացումից մուտքեր | | 16000,0 | 17865 | 17865,0 |
| 5129 | Այլ մեք. սարքավորումների ձեռք բերում | | 3000,0 | 3000,0 | 3000,0 |

| Ոլորտային նպատակ | Վերջնական արդյունքի ցուցանիշ %<br>**(տարեկան)** |
| --- | --- |

| | |
|---|---|
| Ոլորտ 1. Ընդհանուր | |
| •Ապահովել տեղական ինքնակառավարման իրականացումը Բաղրամյան համայնքում, ունենալ բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցման արդյունավետ, մասնագիտացված, նպատակային և թափանցիկ համակարգ: •Ստեղծել բարեկարգ ու զարգացած ենթակառուցվածքներով համայնք բնակիչների համար: | |
| Ոլորտ 2.Շրջակա միջավայրի պաշտպանություն | - |
| •Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումը և չեզոքացումը, ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ | |
| Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում | - |
| 2022 թվականին արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ նախատեսվում են. այն է՝ •Բաղրամյանի համայնքապետարանի ղեկավար կազմի, աշխատակազմի մասնագետների ինչպես նաև ենթակա կառույցների աշխատակիցների մասնակցությունը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության <<Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա>> ՊՈԱԿ-ում կազմակերպված դասընթացներին: | - |
| Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | |
| • Հիմնանորոգել և բարեկարգել ներհամայնքային ճանապարհները: • Իրականացնել գյուղական բնակավայրերի խմելու ջրի և ոռոգման համակարգերի բարելավման աշխատանքներ: • Իրականացնել փողոցների գիշերային | |

| | |
|---|---|
| լուսավորության ցանցի և բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների, բակային տարածքների, մանկական խաղահրապարակների կառուցման և նորոգման աշխատանքներ:<br>● Իրականացնել համայնքի սանիտարական մաքրմանը աղբահանությանը վերաբերող բարեփոխումներ:<br>● Համալրել գոյություն ունեցող ավտոպարկը նոր տեխնիկայով՝ հաշվի առնելով խոշորացված համայնքի աղբահանության ծավալները:<br>● Շարունակել համայնքի տարածքում աղբամանների տեղադրման աշխատանքները:<br>● Կանոնակարգել աղբավայրերի շահագործման աշխատանքները՝ ելնելով բնակավայրի դիրքից և բնապահպանական պահանջներից:և | |
| **Ոլորտ 5. Տրանսպորտ, առևտուր, սպասարկում** | |
| ● Ապահովել ներհամայնքային երթուղիների կանոնավոր սպասարկումը՝ ելնելով բնակավայրերի առանձնահատկություններից:<br>● Կահավորել ներհամայնքային ճանապարհները ճանապարհային նշաններով, գծանշումներով և տրանսպորտային լուսաֆորներով, կանգառներով և սպասարահերով:<br>● Նպաստել առևտրի և սպասարկման կետերի ստեղծմանը՝ կանոնակարգված առևտուր և սպասարկում իրականացնելու նպատակով: | |
| **Ոլորտ 6. Կրթություն** | |
| ● Ապահովել համայնքում կրթական ծառայությունների արդյունավետ մատուցումը:<br>● Աջակցել համայնքում նոր մանկապարտեզների կառուցմանը, վերանորոգել գոյություն ունեցող մանկապարտեզները, ավելացնել մանկապարտեզներում խմբերի թիվը:<br>● Իրականացնել նախադպրոցական կրթության որակի բարելավման և մատչելիության ապահովման աշխատանքներ: | |
| **Ոլորտ 7. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ** | |

| | |
|---|---|
| •Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը՝ մշակույթի և երիտասարդության հետ տարվող որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:<br>• Հիմնանորոգել համայնքի մշակութային օբյեկտները՝ համալրելով նոր գույքով:<br>• Ակտիվացնել մշակութային ծրագրերի միջոցառումներին ուղղված աշխատանքները: | |
| **Ոլորտ 8. Սպորտ** | |
| • Ապահովել Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում որակյալ ծառայությունների մատուցումը:<br>• Կազմակերպել ներհամայնքային մարզական միջոցառումներ:<br>Ընդլայնել մարզադպրոցներում գործող խմբերի քանակները:<br>• Բարելավել մարզադպրոցների շենքային պայմանները, նորացնել մարզական գույքը: | |
| **Ոլորտ 9.Սոցիալական պաշտպանություն** | |
| • Օգնել համայնքի անապահով, բազմազավակ, պատերազմում զոհվածների և վիրավորների ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցներին, բարելավել նրանց սոցիալական վիճակը:<br>• Համագործակցել տարբեր հասարակական կազմակերպությունների հետ՝ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների որակը բարելավելու նպատակով: | |
| **Ոլորտ 10. Գյուղատնտեսություն** | |
| •Աջակցել գյուղատնտեսական նոր տեխնոլոգիաների ներդրմանը համայնքում:<br>• Խթանել գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանը համայնքում:<br>• Աջակցել գյուղմթերքի իրացմանը և վերամշակող արտադրությունների ստեղծմանը:<br>• Աջակցել գյուղոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: | |
| **Ոլորտ 11. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն** | |

| | |
|---|---|
| 2022 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ապահովում: | |
| **Ոլորտ 12. ՏԻՄ-երի կողմից Պաշտպանության ոլորտի հետ կապված աշխատանքների կազմակերպում և իրականացում** | |
| 2022 թվականի ընթացքում Զինկոմիսարիատի հետ համագործակցված համապատասխան աշխատանքների իրականացում: | |

ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) | Ծրագրի ֆինանսավորման աղբյուրը | Վերջնական ցուցանիշ % |
|---|---|---|---|---|
| Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | | | Համայնքի բյուջե | |
| 1. | <<Օրենսդիր և գործադիր մարմիններ>> ծրագիր<br>.Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ. ծրագիր<br>.Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ. ծրագիր<br>.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ. ծրագիր | 417529,1<br>7734,4<br>76196,5 | | |
| Ընդամենը | | 501460,0 | | |
| Ոլորտ 2. Շրջակա միջավայրի պաշտպանություն | | | Համայնքի բյուջե | |
| 1. | Աղբահանում | 246197,6 | | |
| Ընդամենը | | 246197,6 | | |
| Ոլորտ 3. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | | | Համայնքի բյուջե | |
| 1 | <<Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ>> (այլ դասերին չպատկանող) | 7380,0 | | |
| 2 | <<Փողոցների լուսավորություն>>. | 53620,5 | | |
| 3 | <<Ջրամատակարարում>> | 112145,0 | | |
| Ընդամենը | | 173145,5 | | |
| Ոլորտ 4. Տնտեսական հարաբերություններ | | | Համայնքի բյուջե | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Ճանապարհային տրանսպորտ ծրագիր՝ ճանապարհների ընթացիկ նորոգում, նշագծում | 258923,6 | | |
| 2. | Ռոդգում | 37182,6 | | |
| Ընդամենը | | 296106,2 | | |
| Ոլորտ 5.Կրթություն | | | Համայնքի բյուջե | |
| 1 | Նախադպրոցական կրթության կազմակերպում<br>Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում | 614126,0<br>151905,9 | | |
| Ընդամենը | | 766031,9 | | |
| Ոլորտ 6. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ | | | Համայնքի բյուջե | |
| 1 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ ծրագրիր<br><br>Այլ մշակույթային հիմնարկներ ծրագրում ընդգրկվել է Արմավիր համայնքի զբոսայգու ծախսերը 15301,9 հազար ՀՀ դրամ և համայնքային և պաշտոնական տոների և միջոցառումների գծով ծախսերը 18550,0 հազար ՀՀ դրամ | 7000 | | |
| 2 | Գրադարաններ ծրագրով | 6200,0 | | |
| Ընդամենը | | 40356,0 | | |
| Ոլորտ 7.Սոցիալական պաշտպանություն | | | Համայնքի բյուջե | |
| 1 | <<Սոցալական հատուկ արտոնություններ>> ծրագիր, որում ընդգրկված են՝<br>Թաղման ծախսերի մասնակի հատուցման համար, սոցիալապես անապահով խավերին մասնակի օգնություններ տրամադրելու համար՝ համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով: | 20000,0 | | |
| Ընդամենը | | 20000,0 | | |
| Ընդհանուրը | | | | |
| Ոլորտ 8. ՀՀ համայնքների պահուստային ֆոնդեր | | 10102,0 | Համայնքի բյուջե | |
| 1 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդեր | 10102,0 | | |
| Ընդհանուրը | | 10102,0 | | |
| Ոլորտ . 9 Առողջապահություն | | 1200,0 | | |
| 1. | Հանրային առողջապահության ծառայություն | 1200,0 | | |

| | | | |
|---|---|---|---|
| | 1200,0 | | |

Աղյուսակ 4. Կապիտալ ծախսեր

| Հոդված | Ծախսի անվանումը | Կապալառու | Կիսամյակ | Ինն ամիս | Տարեկան | Վերջնարդյունք |
|---|---|---|---|---|---|---|
| 5112 | Շենքերի շինարարությունների կառուցում | | 150000,0 | 180000,0 | 285400,0 | |
| 5113 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | | 30000,0 | 60000,0 | 67,941,0 | |

Մոնիթորինգի և գնահատման պլանը կազմվում է կիսամյակային կամ տարեկան կտրվածքով:

- ✓ Աղյուսակում ներկայացվում են ՏԱՊ-ում ներկայացվող բոլոր ծրագրերը: Որպես արդյունքային՝ միջոցառումների մուտքային, ելքային (քանակական, որակական և ժամկետայնության) և ծրագրի վերջնական ցուցանիշների թիրախային արժեքներ նշվում են նույն աղյուսակի համապատասխան ցուցանիշները, իսկ որպես դրանց փաստացի արժեքներ՝ ծրագրի իրականացումից հետո կամ ծրագրի մոնիթորինգի իրականացման պահին ստացված փաստացի արժեքները:
- ✓ Ցուցանիշի արժեքի շեղումը փաստացի և թիրախային արժեքների տարբերությունն է:
- ✓ Ցուցանիշի արժեքի շեղումը կամ դրա պատճառները մեկնաբանվում է «Մեկնաբանություն» սյունակում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 70-Ա

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» 10 րդ հոդվածի 11-րդ մասով, 18-րդ հոդվածի 1–ին մասի 42–րդ կետով,հիմք ընդունելով Բաղրամյան համյնքի բնակիչների դիմումները ,Բաղրամյան համայնքապետարանում գործող սոցալական հանձնաժողովի 18.07.2022 թվականի թիվ 2 արձանագրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը ՝

**1.**Բաղրամյան համայնքի 2022 թվականի բյուջեի <<Սոցիալական օգնություններ >> բաժնից տրամադրել օգնություն համձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնքի ավագանու
2022 թվականի մայիսի
N 70-Ա որոշման

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

| | ԱԱՀ | Հասցե | Գումար |
|---|---|---|---|
| 1 | Ոսկանյան Շուշանիկ Ջակոյի | Գ. Արևադաշտ Սարի թաղ փ. Տ. 1.1 | 30000 |
| 2 | Բարսեղյան Լարիսա Նիկոլայի | Գ. Վանանդ | 20000 |
| 3 | Սմբատյան Գրիշա Արտաշի | Գ. Վանանդ Պ. Սևակի փ. Տ. 49 | 20000 |
| 4 | Սիմոնյան Անահիտ Արթուրի | Գ. Դալարիկ Օրջոնիկիձեի փ. Շ. 4 բն. 1 | 50000 |
| 5 | Գրիգորյան Լուսիկ Սուքիասի | Գ. Դալարիկ Տերյան փ. Տ. 23/1 | 30000 |
| 6 | Նիկոյան Լուսյա Վաղարշակի | Գ. Դալարիկ Շահումյան փ. Շ. Բն. 14 | 20000 |
| 7 | Ենգոյան Սամվել Համլետի | Գ. Դալարիկ Երկաթգծի փ. Տ.12 | 50000 |
| 8 | Ավետիսյան Բենյամին Վրեժի | Գ. Լեռնագոգ 5 փ. Շ.2 բն,3 | 30000 |
| 9 | Հովհաննիսյան Քրիստինե Վանուշի | Գ. Լեռնագոգ 4փ. Տ.38 | 50000 |
| 10 | Պողոսյան Արմեն Արշակի | Գ. Լեռնագոգ Պարույր Սևակի փ. Տ. 24 | 30000 |
| 11 | Օվսեփյան Իդա Սերի | Գ. Բաղրամյան Արցախի փ. Շ.39 բն. 8 | 30000 |
| 12 | Պողոսյան Նարինե Գևորգի | Գ.Քարակերտ Երկաթուղայինների փ. Տ. 30 | 20000 |
| 13 | Մանուկյան Սաթենիկ Վարազդատի | Գ.Քարակերտ Բաբաջանյան փ. Շ.5 բն. 5 | 30000 |
| 14 | Սանոսյան Անահիտ Սուրենի | Գ.Քարակերտ Բարեկամության փ. Տ.6 | 30000 |
| 15 | Նահապետյան Թինա Համբարձումի | Գ. Քարակերտ Բաբաջանյան փ. Շ.1 բն,23 | 30000 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 71-Ա

### ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետով

1,Սահմանել Բաղրամյան համայնքի պաշտոնական համացանցային կայքի վարման կարգը՝համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված
Բաղրամյան համայնի ավագանու
2022 թվականի հուլիսի 26-ի
N 71-Ա որոշման

# ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգի նպատակն է սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի պաշտոնական համացանցային կայքի (այսուհետ՝ պաշտոնական կայք) վարման կարգը:
2. Պաշտոնական կայքի դոմենային անունն է bagramyan.am
3. Պաշտոնական կայքը կառավարում է Բաղրամյան համայնքապետարանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ):
4. Պաշտոնական կայքի վարման համակարգող (ադմինիստրատոր) է հանդիսանում Աշխատակազմի համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի կառավարիչը:
5. Պաշտոնական կայքում պարտադիր գրանցման են ենթակա օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերը, տեղեկությունները և նյութերը:
6. Համացանցում պաշտոնական կայքը հասանելի է օրվա մեջ 24 ժամ, շաբաթական 7 օր:

## II. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

7. Պաշտոնական կայքը նախատեսված է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին տեղեկատվություն տրամադրելու համար:
8. Տեղական ինքնակառավարման մարմինները սահմանում են պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվության բովանդակությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգին համապատասխան:
9. Պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվությունը պետք է լինի արդիական, հավաստի և ամբողջական:
10. Պաշտոնական կայքում տեղեկատվության հասանելիության ապահովման, արդիականացման և տեղադրման գործընթացի կազմակերպման պատասխանատու հանդես է գալիս սոցիալական ծրագրերի, առողջապահության և տեղեկատվության բաժինը՝ Աշխատակազմի կանոնադրությանը համապատասխան: Պաշտոնական կայքում տեղեկատվության ապահովման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Աշխատակազմի քարտուղարը:

11. Պաշտոնական կայքում ներբեռնման հնարավորությամբ պետք է առկա լինեն՝

1) համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընդհանուր գործունեության վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունը.

2) համայնքի ղեկավարի և ավագանու ընդունած նորմատիվ իրավական ակտերը.

3) համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, ծրագրի կատարողականը ու դրա վերաբերյալ հաշվետվությունները.

4) համայնքի բյուջեն, բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները.

5) համայնքի գործունեության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի վերահսկողության արդյունքները.

6) համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի նախագծերը.

7) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, բացառությամբ պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող, համայնքի ավագանու համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարման կամ օգտագործման տրամադրվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկի.

8) համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակում տրվող թույլտվությունների դիմումների ձևաթղթերը.

9) համայնքին վերաբերող օրենսդրական և ենթաօրենսդրական նախաձեռնությունների և նախագծերի, այդ թվում՝ համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին տեղեկատվությունը.

10) համայնքում բնակիչների հետ հանդիպումների, հանրային լսումների և քննարկումների նյութերը, ընթացակարգը, անցկացման վայրը և ժամը.

11) համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, ինչպես նաև սույն մասի 9-րդ կետով նախատեսված այլ փաստաթղթերի վերաբերյալ անցկացված հանրային լսումների և քննարկումների արդյունքները.

12) համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման և այլ կարգեր.

13) համայնքային խնդիրների վերաբերյալ համապատասխան քաղաքացիական նախաձեռնության մասին տեղեկացումը.

14) համայնքի ավագանու սահմանած այլ տեղեկատվություն:

15) համայնքում առկա համայնքային կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (բյուջե, գործունեության տեսակ, հասցե, կոնտակտային տվյալներ) և (կամ) դրանց համացանցային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում).

16) համայնքապետարանի և դրա ենթակայությամբ գործող կառույցների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները.

17) համայնքում պետական և համայնքային միջոցներով իրականացվող շինարարությունների հետ կապված տեղեկատվությունը.

18) համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկատվությունը.

19) համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ-գործընկերների մասին ընդհանուր բնույթի տեղեկություններ՝ դասակարգված ըստ սոցիալական պաշտպանության, առողջապահական, կրթական, շրջակա միջավայրի պաշտպանության ու տնտեսական զարգացման ոլորտների.

20) համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառավարվող ընթացիկ ու ավարտված նախագծերի ցուցասրահը (պորտֆոլիոն)՝ դրանց կողմից ապահովվող սոցիալական, բնապահպանական, առողջապահական, տնտեսական ու այլ ազդեցությունների հիմնավորմամբ, ինովացիոն գործոնի նկարագրությամբ.

21) համայնքի տուրիստական պրոֆիլը և ենթակառուցվածքների (տրանսպորտ, քարտեզներ, հանրային ծառայություններ, հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության առկա լուծումներ, եղանակային ռիսկեր, բնակարանային շուկա, զվարճության ոլորտի օբյեկտներ և այլն) մասին ամբողջական տեղեկությունները:

12. Պաշտոնական կայքում կարող է տեղադրվել՝

1) համայնքի պատմությունը,

2) Աշխատակազմի ընթացիկ գործունեության մասին տեղեկատվությունը,

3) Աշխատակազմի կառուցվածքը (հաստիքացուցակ, աշխատակիցների ցուցակ, աշխատակիցների կոնտակտային տվյալներ) և գրաֆիկական պատկերը,

4) Աշխատակազմի հիմնական խնդիրներն ու գործառույթները,

5) կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումների, համայնքային ենթակայության մարմինների խնդիրներն ու գործառույթները, գտնվելու վայրերը, աշխատակազմի կոնտակտային տվյալները,

6) այն նորմատիվ ակտերը կամ դրանց հղումները, որոնցով կարգավորվում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը.

7) տեղեկություններ իրականացվող/իրականացված ծրագրերի մասին (ծրագրերի ցանկը, տեղեկություններ ծրագրերի իրականացման շրջանակներում անցկացվող միջոցառումների մասին, հաշվետվություններ).

8) Աշխատակազմում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների, աուդիտի մասին տեղեկատվություն.

9) համայնքի ղեկավարի, ավագանու ուղերձները, ավագանու կանոնակարգը.

10) Աշխատակազմի գործունեության վերաբերյալ հաշվետվություններ, զեկույցներ և այլ տեղեկատվություն.

11) թափուր պաշտոն զբաղեցնելու մասին տեղեկությունները՝ թափուր պաշտոնների ցանկը, ներկայացվող պահանջները, աշխատանքի ընդունման կարգը, մրցույթի արդյունքները և դրանց բողոքարկման կարգը կամ հղում համապատասխան մարմնի պաշտոնական կայքին.

12) պաշտոնական միջոցառումների մասին տեղեկությունները, որոնք կազմակերպվում են Աշխատակազմի կողմից (ավագանու նիստեր, համայնքի ղեկավարի մոտ խորհրդակցություններ և այլն),

13) համայնքի, Աշխատակազմի մասին ԶԼՄ-ներում հրապարակումները կամ դրանց հղումները.

14) Աշխատակազմին կամ դրա պաշտոնատար անձանց տրված մրցանակներն ու շնորհակալագրերը.

15) համայնքի ղեկավարի, ավագանու անդամների անունները, ազգանունները, կենսագրությունը, կոնտակտային տվյալները.

16) տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը.

17) Աշխատակազմի կողմից մատուցվող ծառայությունների (այդ թվում առցանց), ընթացակարգերի նկարագրությունը, դրանց վերաբերյալ պարզաբանելու իրավասություն ունեցող անձի կոնտակտային տվյալները.

18) հղումներ պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Արմավիրի մարզպետարանի և, առկայության դեպքում, նաև համայնքային ենթակայության մարմինների պաշտոնական կայքերին.

19) Աշխատակազմի կոնտակտային տվյալները՝ փոստի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, ինտերնետային կայքի հասցեն, հասցեի քարտեզային պատկերը, հեռախոսահամարները.

20) համայնքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի, շենքերի և շինությունների, տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվություն.

21) համայնքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարման և մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ հայտարարությունները՝ տեքստային և գրաֆիկական տեղեկություններով փաթեթը.

22) գնումների մասին հայտարարությունները.

23) համայնքում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվությունը.

24) տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ կապված տեղեկատվությունը (համայնքի ղեկավարի, ավագանու անդամի թեկնածուները, ընտրատեղամասերը, ընտրացուցակները, ընտրությունների արդյունքները և այլն).

25) ընտանեկան նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակներ.

26) տեսաձայնային նյութեր և նկարներ.

27) առցանց հարցումներ:

13. Սույն կարգի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված տեղեկությունները պաշտոնական կայքում չեն հրապարակվում, եթե դրանք՝

1) պարունակում են պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

2) խախտում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում են հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ.

4) բացահայտում են մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում են հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

14. Չի թույլատրվում պաշտոնական կայքում տեղադրել գովազդային բնույթի տեղեկատվություն՝ բացառությամբ սոցիալական գովազդի:

15. Բացի սույն կարգի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված տեղեկություններից՝ պաշտոնական կայքում կարող է տեղադրվել նաև այլ լրացուցիչ տեղեկություն:

16. Պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվությունը հրապարակվում է պարտադիր հայերենով, իսկ ռուսերենով, անգլերենով և այլ լեզուներով՝ ըստ հնարավորության:

Պաշտոնական կայքում այլ լեզուներով առկա տեղեկատվությունը պետք է համապատասխանի հայերենով ներկայացված տարբերակին:

17. Պաշտոնական կայքում տեղադրված նյութերը պետք է պարունակեն հղումներ տեղեկատվության աղբյուրներին, հակառակ դեպքում դրանք կհամարվեն տվյալ մարմնի պաշտոնական տեղեկատվություն:

## III. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

18. Պաշտոնական կայքի գործունեության կազմակերպմանը մասնակցում են հետևյալ սուբյեկտները՝

1) տեղեկատվության բովանդակության պատասխանատուներ.

2) տեղեկատվություն տրամադրողներ.

3) կայքի ադմինիստրատոր (ադմինիստրատորներ):

19. Տեղեկատվության բովանդակության պատասխանատուները քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնորները, համայնքային ծառայողները, քաղաքացիական աշխատանք կատարողները և/կամ պայմանագրային աշխատողներն են:

20. Տեղեկատվության բովանդակության պատասխանատուները պաշտոնական կայքում տեղադրելու համար հավաքագրում, մշակում, տեղադրում և հեռացնում են նյութերը:

21. Աշխատակազմը ապահովում է տեղեկատվական նյութերում ուղղագրական կանոնների պահպանումը, հեղինակային և հարակից իրավունքների ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը:

22. Տեղեկատվություն տրամադրողները պաշտոնական կայքում տեղադրելու նպատակով ապահովում են իրենց ոլորտի գործունեությանն առնչվող հավաստի և թարմացված տեղեկատվության նախապատրաստումը և փոխանցումը տեղեկատվության բովանդակության պատասխանատուներին:

23. Կայքի ադմինիստրատորը նշանակվում է պաշտոնական կայքի գործունեության աշխատանքների համակարգման համար և իրականացնում է՝

1) պաշտոնական կայքում գրանցված Աշխատակազմի աշխատակիցների, այլ անձանց իրավասությունների տրամադրում և զրկում.

2) պաշտոնական կայքի աշխատանքի մշտադիտարկում.

3) տեղեկատվության բովանդակության պատասխանատուներին պաշտոնական կայքի շահագործման, անվտանգության ապահովման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում.

4) պաշտոնական կայքի տվյալների շտեմարանի պահուստային պատճենում և տեղեկատվության անվտանգության ապահովման աշխատանքների կատարում.

5) պաշտոնական կայքի անխափան աշխատանքի ապահովման տեխնիկական աշխատանքի իրականացում, այդ թվում՝ սերվերի ծրագրային և տեխնիկական սպասարկում, հակավիրուսային ծրագրերի թարմացում.

6) սերվերի աշխատանքի մշտադիտարկում.

7) պաշտոնական կայքի գործունեության խափանման ժամանակ (ծրագրի կամ սարքավորման անսարքություն, կապուղիների խափանում, տվյալների շտեմարանների չթույլատրված մուտքի, տվյալների զանգվածների խափանում և այլն) անհապաղ տեղեկացնում է Աշխատակազմի ղեկավարությանը և կայքը սպասարկող մասնագիտացված կազմակերպությանը (եթե առկա է այդպիսի կազմակերպություն): Ձեռնարկվում են միջոցներ՝ տեղեկատվական ենթակառուցվածքի գործառնության նորմալ ռեժիմի վերականգնման համար:

## IV. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ

24. Պաշտոնական կայքի տեղեկատվությունը բաժանվում է երեք մասի՝

1) ընդհանուր հասանելի.

2) մասնագիտական հասանելի.

3) տեխնոլոգիական տեղեկատվություն:

25. Ընդհանուր հասանելիության տեղեկատվությունը պաշտոնական կայքում տեղադրված և տեխնոլոգիական տեղեկատվություն չհանդիսացող տվյալներն են:

26. Մասնագիտական հասանելիության տեղեկատվությունը հասանելի է միայն Աշխատակազմի աշխատակիցներին, ովքեր ունեն համապատասխան իրավասություններ.

27. Տեխնոլոգիական տեղեկատվությունը տեղեկատվական անվտանգության ղեկավարման համակարգին, ինչպես նաև տեղեկատվական համակարգի ղեկավարման և տեղեկատվության (հասցեների, ազգանունների, նույնականացման տվյալների, օգտագործողի և տեխնիկական անձնակազմի

գաղտնաբառերի, համակարգի օբյեկտներին հասանելիության իրավունքների, տվյալների բազաների, համակարգերի և դրանց պաշտպանության ապահովման, աշխատանքային չափորոշիչների հավելվածների մասին տեղեկատվություն) մշակման եղանակի վերաբերյալ տվյալներն են:

28. Տեխնոլոգիական միջոցների կիրառումը պետք է ապահովի պաշտոնական կայքի տեղեկատվության պահուստային պատճենման և տվյալ տեղեկատվության վերականգնման գործընթացը:

29. Աշխատակազմի պաշտոնական կայքի սերվերում կիրառվող էլեկտրոնային ծառայությունների (բաց պորտերի) ցանցային հասանելիությունը պետք է սահմանափակվի:

## V. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

30. Պաշտոնական կայքի ղեկավարման և գործունեության ապահովման ժամանակ Աշխատակազմը ղեկավարվում է տեղեկատվական անվտանգության ու տեղեկատվության պահպանման ապահովման ոլորտի գործող օրենսդրությամբ և ազգային ստանդարտներով:

31. Աշխատակազմը պաշտոնական կայքի ղեկավարման, տեղեկատվական-հեռահաղորդակցական ենթակառուցվածքների և տեղեկատվական համակարգերի շահագործման ժամանակ պարտավոր է ապահովել քաղաքացիների անհատական տվյալների գաղտնիության իրավունքը:

32. Պաշտոնական կայքի սերվերը պետք է գտնվի առանձնացված, մաքուր և ապահով սենյակում, որը պետք է ունենա անվտանգության համակարգ և ապահովված լինի նորմալ պայմաններով (ջերմաստիճան, խոնավություն): Մուտքը այդ սենյակ թույլատրվում է միայն համապատասխան իրավասություն ունեցող աշխատակցին:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Բաղրամյան համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու նպատակով:
«Բաղրամյան համայնքի պաշտոնական կայքի վարման կարգը սահմանելու մասին » Բաղրամյան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:
«Բաղրամյան համայնքի պաշտոնական կայքի վարման կարգը սահմանելու մասին » Բաղրամյան համայքնի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Բաղրամյան համայնքի բյուջում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 72-Ա

## ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը:

1.2022 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հողերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 73-Ա

### ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՐԱՏԱՊ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի.....գրությունը

1. Հավանության արժանացնել Բաղրամյան համայնքի հրատապ ծրագրերը՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքներն իրականացնել Հավելվածում ներառված ծրագրերը ՀՀ կառավարության կողմից համապատասխան ֆինանսական ռեսուրսների տրամադրման դեպքում:
3. Հավելվածում ներառված ծրագրերի հրտապությունից ելնելով և ՀՀ կառավարության կողմից ծրագրերի հաստատման համար սահմանված սեղմ ժամկետների հետևանքով Բաղրամյան համայնքապետարանին թույլատրել հավելվածում ներառված ծրագրերի իրականացման համար համապատասխան նախագծային աշխատանքների գնումը կատարել մեկ անձի մոջցով:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի*
*Բաղրամյան համայնքի ավագանու*
*2022 թվականի հուլիսի 26-ի*
*N 73-Ա որոշման*

**Բաղրամյան համայնքի տասնչորս բնակավայրերում հրատապ ծրագրերով նախատեսվող շինարարական աշխատանքների վերաբերյալ**

**ՏԵՂԵԿԱՆՔ**

| Գյուղի անվանումը | Ծրագրի անվանումը | Ծրագրի հրատապության նկարագիրը և հիմնավորումը | Ծրագրի արժեքը /դրամ/ | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|
| Բաղրամյան | Հատուկ տեխնիկա JSB 4 CX | Համայնքը ունի շուրջ 42000 հա ընդհանուր վարչական տարածք, որից մշակվում է 8500 հա: Ոչ բարվոք վիճակում են գտնվում ոչ միայն ներհամայնքային փողոցները, այլ ամբողջությամբ անմխիթար վիճակում են գտնվում դաշտամիջյան ճանապարհները:Վերջինիս պատճառով ողջ բերքը դաշտերից դեպի բնակավայր կամ շուկա տեղափոխելը դառնում է բարդ խնդիր և դրականորեն ազդում է ամբողջ բերքը: Անհարժեշտություն կա ամեն տարի մեկից երկու անգամ, իսկ որոշ տարիների, հորդառատ անձրևների ու տեղումների պատճառով նույնիսկ 3-4 անգամ բարեկարգել և վերականգնել դաշտամիջյան ճանապարհները, իսկ որոշ բնակավայրերում հեղեղումների ու վարարումների արդյունքում քանդված փողոցներն ու տնամերձ հողամասերը: | 50.0 մլն. | |
| Լեռնագոգ | Հեղեղաջրերի կանխման և ջրահեռացման նպատակով ջրատարի կառուցման աշխատանքներ | Գյուղի անմիջապես հարակից լանջերից տարվա ընթացքում 3-4 անգամ՝ հեղեղ անձրևների ժամանակ, ձնավորվում են սելավաջրեր, որոնք ներխուժում են փողոց, կուտակվում փողոցի կենտրոնական մասում և սկսում են ներխուժել փողոցի երկարությամբ կողք կողքի գտնվող անհատական և բազմաբնակարան շենքերի նկուղներն ու շքամուտքերը՝ ստեղծելով փլուզման և ավերածությունների վտանգ:Անհրաժեշտություն կա կառուցելու վթարային ջրահեռացման համակարգ: | 3.0 մլն. | Նախագիծ |
| Հուշակերտ | Բուժամբուլատորիայի հիմնանորոգում | Բուժամբուլատորիան կառուցվել է 1993թվականին, սպասարկում է ոչ միայն Հուշակերտ գյուղը, այլ նաև հարակից Տալվորիկ, Արտամետ և Արևադաշտ գյուղերի ազգաբնակչությանը:Կառուցման օրվանից առ այսօր ոչ մի անգամ թե՛ ընթացիկ, թե՛ կապիտալ նորոգում չի իրականացվել,որի արդյունքում քայքայվել, շարքից դուրս են եկել սանհանգույցը, պատուհաններն ու պատուհանագոգերը, ներքին ողջ հարդարանքը և տանիքի ծածկը: | 10.0 մլն. | Նախագիծ |
| Տալվորիկ | Խմելաջրի մագիստրալ ջրատարի կառուցում՝ մինչև 2.2 կմ երկարությամբ, ներտնտեսային ցանցի ընդլայնում և ջրաչափական հաշվիչների տեղադրում | Տալվորիկ գյուղը ունի ոչ ամբողջությամբ ավարտված խմելաջրի նորակառույց ներքին ցանց: Որպես խմելաջուր օգտագործվում է բնակավայրի անմիջապես ներսում դեռևս 1995 թվականին կառուցված խորքային հորի ջուրը, որը իրականում օգտագործվում է տեխնիկական և այլ նպատակներով և որը խմելու համար բացարձակապես պիտանի չի:Բնակավայրից 2200 մետր հեռավորության վրա անցնում է Վեոլիա Ջուր ընկերությանը պատկանող Արտամետ պոմպակայանից Արտամետ գյուղ խմելաջուր մղող խողովակաշարը:Խիստ անհրաժեշտ և նպատակահարմար է նշված խողովակաշարից խմելաջուր տեղափոխել Տալվորիկ բնակավայր:Միաժամանակ անհրաժեշտություն կա տեղադրելու ջրաչափական սարքավորումներ՝ բնակչության հետ աշխատանքները ճիշտ կազմակերպելու նպատակով: | 20.0 մլն. | Նախագիծ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արևադաշտ | ա/Ոռոգման նպատակով մեկ խորքային հորի վերականգնում | Արևադաշտ գյուղը ոռոգման ջուր հիմանականում ստանում է Արմավիրի ջրանցքի վրա տեղադրված Հուշակերտի պոմպակայանից: Գտնվելով ծայրամասային հատվածում՝ տեխնիկական որոշակի խնդիրների պատճառով ոռոգման ջրի մատակարարումը իրականացվում է ընդհատումներով և որոշակի խոչընդոտներով: Գյուղում ոռոգման նպատակով դեռևս 80-ական թվականներին հորատվել են 4 խորքային հորեր, որոնցից ոչ մեկն այս պահին չի գործում: Անհրաժեշտություն կա գոնե հորերից մեկը վերագործարկելու,որի արդյունքում հնարավորություն կլինի բնակչության ջրապահանջարկի մասնակի բարելավում իրականացնել: | 10.0 մլն. | Թերությունների ակտով |
| | բ/ Խմելաջրի ներտնտեսային ցանցի բարեկարգում, հաշվիչների և դիտահորերի տեղադրում | 2012թվականին ՄԱԿ-ի Համայնքների Զարգացման Հիմնադրամի շրջանակներում իրականացվել է գյուղի խմելաջրի մատակարարման ցանցի կառուցման աշխատանքներ Արտամետի պոմպակայանից մինչև բնակավայրի ներսը: Թերի է մնացել ներսում որոշ հատվածների և ամբողջությամբ ջրաչափական սարքավորումների և ջրաչափերի տեղադրման հարցը: Բնակչության հետ աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտություն կա նշված խնդրի լուծման: | 3.0 մլն. | Թերությունների ակտով |
| Բագարան | Խմելաջրի լրացուցիչ քանակության ավելացման նպատակով 2 կմ երկարությամբ ջրատարի կառուցում | 2022 թվականին սուբվենցիոն ծրագրերով իրականացվելու է ամբողջ Բագարան գյուղի խմելաջրի ներքին ցանցի և պոմպակայանի կառուցման աշխատանքներ: Խմելաջուր մատակարարվելու է Գործի աղբյուր կոչվող բնական ջրաղբյուրից, որը տարվա որոշ ամիսներին մինչև 50 տոկոս կարող է պակասել,ուստի դեֆիցիտը կանխելու նպատակով անհրաժեշտություն կա Գործի աղբյուրից 2 կմ հեռավորության վրա գտնվող մեկ այլ բնական աղբյուրի ջուրը, որը աննպատակ թափվում և խառնվում է Արաքս գետի ջրերին 50մմ տրամագծով փակ խողովակաշարով տեղափոխել մինչև Գործի աղբյուրի հարևանությամբ գտնվող ՕԿԶ: | 10.0 մլն. | Նախագիծ |
| Երվանդաշատ | Երկու հակակարկտային կայանների տեղադրում | Ժամանակակից տեխնոլոգիաներով կառուցված հակակարկտային կայանները ընդհանուր առմամբ արդարացնում են իրենց: Ղարաղալայից մինչև Երվանդաշատ, Վանանդից մինչև Շենիկ, երկու զուգահեռ ուղղությամբ տեղակայված երկշերտ զոնան մոտ 60-70 տոկոսով կարողանում է պաշտպանել կարկուտից , որոշ հատվածներ դեռևս բաց են մնում, ուստի անհրաժեշտություն կա աստիճանաբար լրացնել նաև այդ բացը, որի վկայությունն է վերջին 3-4 տարում նշված տարածքների մշտապես կարկտահարվելը: | 6.0 մլն. | Թերությունների ակտով |
| Քարակերտ | Բաբաջանյան 5 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի առաջին մուտքի վթարային իրավիճակի վերացում | Շենքը կառուցվել է դեռևս անցած դարի 50-ական թվականներին, ունի լուրջ վթարային խնդիրներ, հատկապես առաջին մուտքի երկրորդ հարկի հենապատի քայքայման և տեղաշարժման արդյունքում տեղաշարժվել են ծածկի պանելները և անջատվել պատից, որի արդյունքում առաջացել են վտանգավոր վթարային իրավիճակ, որը ունի հրատապ կարգով վերացնելու անհրաժեշտություն: | 2.0 մլն. | Նախագիծ |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 74-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի դրույթների և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

1. Տալ համաձայնություն 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Բաղրամյան համայնքի հողային հաշվեկշռին(հողային ֆոնդի առկայության և բախշման մասին հաշվետվություն)՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքապետարանի Քաղաքաշինության և հողաշինության,գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետերին ՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 01/07/2022թ.)

Ձև N 22

Մարզ: Արմավիր (անվանում) — 4 (Կոդ)

Համայնք: Բաղրամյան (Բաղրամյանի 2րջ.) (անվանում) — 253 (Կոդ)

Հավելված
Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 26-ի թիվ 74-Ա

(հեկտարներով)

| NN | Նպատակային նշանակություն | Հողատեսք, գործառնական նշանակություն | Կոդի NN | Ընդամենը Σ2+3+4+8+12 | Սեփականության սուբյեկտ: ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | համայնքային: ընդամենը (5+6+7) | համայնքային: մշտական օգտագործման տրված հողեր | համայնքային: վարձակալության տրված հողեր | համայնքային: օգտագործման և վարձակալության չտրամադրված հողեր | պետական: ընդամենը (9+10+11) | պետական: մշտական օգտագործման տրված հողեր | պետական: վարձակալության տրված հողեր | պետական: օգտագործման և վարձակալության չտրամադրված հողեր | Օտար պետությունների, ՀՀ-ում ... |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1,1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 10103,53 | 5871,75 | 2379,46 | 1805,53 | | 591,44 | 1214,09 | | | | | 46,79 |
| 1.2 | | բազմ. տնկարկներ, | | 5255,27 | 3819,61 | 1273,15 | 137,59 | | 127,13 | 10,46 | | | | | 24,92 |
| 1.2.1 | | այդ թվում[a] | | 3260,07 | 2455,37 | 656,62 | 130,89 | | 120,43 | 10,46 | | | | | 17,20 |
| 1.2.2 | | խաղողի այգի | | 1995,20 | 1364,25 | 616,53 | 6,70 | | 6,70 | | | | | | 7,72 |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | | |
| 1,3 | | խոտհարք | | 48,79 | 27,40 | | 21,39 | | | 21,39 | | | | | |
| 1,4 | | արոտ | | 16338,72 | 4846,37 | 7575,73 | 3426,15 | | 652,75 | 2773,41 | 279,97 | | | 279,97 | 210,50 |
| 1,5 | | այլ հողատեսքեր | | 8498,99 | 2401,53 | 2331,48 | 3738,62 | | 305,35 | 3433,26 | | | | | 27,37 |
| 1 | | Ընդամենը | | 40245,30 | 16966,66 | 13559,81 | 9129,28 | | 1676,67 | 7452,61 | 279,97 | | | 279,97 | 309,58 |
| 2,1 | 2.Բնակավայրերի | բնակելի | | 834,27 | 831,54 | 0,71 | 1,42 | | | 1,42 | | | | | 0,59 |
| 2.1.1 | | այդ թվում[a] | | 831,26 | 829,35 | 0,71 | 0,95 | | | 0,95 | | | | | 0,25 |
| 2.1.2 | | այգեգործական (ա | | | | | | | | | | | | | |
| 2,2 | | հասարակական | | 118,77 | 8,39 | 70,34 | 14,00 | | | 14,00 | 26,04 | 6,80 | | 19,24 | |
| 2,3 | | խառը | | 1,84 | 0,08 | 1,24 | 0,52 | | | 0,52 | | | | | |
| 2,4 | | ընդհանուր | | 173,94 | 1,06 | | 172,88 | | | 172,88 | | | | | |
| 2,5 | | այլ հողեր | | 170,85 | 5,37 | | 165,48 | | 2,23 | 163,25 | | | | | |
| 2 | | Ընդամենը | | 1299,67 | 846,44 | 72,29 | 354,30 | | 2,23 | 352,07 | 26,04 | 6,80 | | 19,24 | 0,59 |
| 3,1 | 3. Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. | արդյունաբերության | | 41,86 | 15,38 | 14,12 | 12,36 | 1,00 | | 11,36 | | | | | |
| 3,2 | | գյուղատնտեսական, | | 170,28 | 72,27 | 54,43 | 40,56 | | 0,81 | 39,75 | 3,02 | | 3,02 | | |
| 3,3 | | պահեստարանների | | 34,20 | 4,23 | 22,13 | 7,84 | | 2,31 | 5,53 | | | | | |
| 3,4 | | ընդերք | | 333,78 | 5,00 | | 10,17 | | 10,17 | | 318,61 | | 58,93 | 259,68 | |
| 3 | | Ընդամենը | | 580,12 | 96,88 | 90,68 | 70,93 | 1,00 | 13,29 | 56,64 | 321,63 | | 61,95 | 259,68 | |
| 4,1 | 4.Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմ. ենթ. | էներգետիկայի | | 10,89 | 7,18 | 1,63 | 2,08 | | | 2,08 | | | | | |
| 4.2 | | կապի | | 0,52 | 0,02 | 0,01 | 0,49 | | | 0,49 | | | | | |
| 4,3 | | տրանսպորտի | | 132,38 | | | | | | | 132,38 | | | 132,38 | |
| 4,4 | | կոմունալ | | 8,42 | 0,41 | 0,09 | 6,20 | | | 6,20 | 1,72 | | | 1,72 | |
| 4 | | Ընդամենը | | 152,21 | 7,61 | 1,73 | 8,77 | | | 8,77 | 134,10 | | | 134,10 | |
| 5,1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպանական | | | | | | | | | | | | | |
| 5.1.1 | | այդ թվում[a] արգելոցն | | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | | | | | | | | | | | | | | |
| 5.1.3 | | ազգային | | | | | | | | | | | | | |
| 5,2 | | առողջարարական | | | | | | | | | | | | | |
| 5,3 | | հանգստի | | | | | | | | | | | | | |
| 5,4 | | պատմական և | | 228,90 | | | 27,05 | | | 27,05 | 201,85 | | | 201,85 | |
| 5 | | Ընդամենը | | 228,90 | | | 27,05 | | | 27,05 | 201,85 | | | 201,85 | |
| 6 | 6.Հատուկ նշանակության | Ընդամենը | | 232,77 | | | | | | | 232,77 | | | 232,77 | |
| 7,1 | 7. Անտառային | անտառ | | 7,71 | | | | | | | 7,71 | | | 7,71 | |
| 7,2 | | թփուտ | | 8,30 | | | | | | | 8,30 | | | 8,30 | |
| 7,3 | | վարելահող | | | | | | | | | | | | | |
| 7,4 | | խոտհարք | | | | | | | | | | | | | |
| 7,5 | | արոտ | | | | | | | | | | | | | |
| 7,6 | | այլ հողեր | | | | | | | | | | | | | |
| 7 | | Ընդամենը | | 16,01 | | | | | | | 16,01 | | | 16,01 | |
| 8,1 | 8. Ջրային | գետեր | | 159,28 | | | | | | | 159,28 | | | 159,28 | |
| 8,2 | | ջրամբարներ | | 47,58 | 6,21 | 40,40 | 0,97 | | | 0,97 | | | | | |
| 8,3 | | լճեր | | 1,47 | 0,78 | | 0,69 | | | 0,69 | | | | | |
| 8,4 | | ջրանցքներ | | 116,39 | | | 38,20 | | 3,43 | 34,77 | 78,19 | | | 78,19 | |
| 8,5 | | հիդրոտեխ. և | | 11,27 | | | 0,83 | | | 0,83 | 10,44 | | | 10,44 | |
| 8 | | Ընդամենը | | 335,99 | 6,99 | 40,40 | 40,69 | | 3,43 | 37,26 | 247,91 | | | 247,91 | |
| 9,1 | 9. Պահուստային | աղուտներ | | | | | | | | | | | | | |
| 9,2 | | ամազուտներ | | | | | | | | | | | | | |
| 9,3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | | |
| 9,4 | | | | | | | | | | | | | | | |
| 9,5 | | այլ անօգտագործելի | | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ | | | | 43090,96 | 17924,58 | 13764,91 | 9631,02 | 1,00 | 1695,62 | 7934,40 | 1460,28 | 6,80 | 61,95 | 1391,53 | 310,17 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 75-Ա

## ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՒՇԱԿԵՐՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հ անրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Համայնքի սեփականություն հանդիսացող 0.0269 հա , 0,0698 հա և 0,54 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողեր աճուրդային եղանակով օտարել:

2.Լոտի չափը սահմանել 0,01հա-20.0 հա:

3 Լոտերի մեկնարկային գինը սահմանել

Լոտ 1.Ծածկագիր 04-061-0151-0002 , 0,0269 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը՝ 10000 ՀՀդրամ:

Լոտ 2.Ծածկագիր 04-061-01551-0003 , 0,0698 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը՝ 20000 ՀՀդրամ:

Լոտ 3.Ծածկագիր 04-061-0104-0001 , 0,54 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը՝ 60000 ՀՀդրամ:

4.Առաջարկել՝ համայնքի ղեկավարին իրականացնել սույնորոշումից բխող իրավական գործողությունները:

5.Սույ նորոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՓԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 76-Ա

## «ԱԳՐՈՀԱՐՎԵՍՏ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՏԱՄԵՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանարապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի, 31-րդ կետով, «Հողային օրեսգրքի»7-րդ հոդվածի 9-րդ, 15-րդկետերի պահանջներով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ, 12-րդ, 14-րդ և 30-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով «ԱԳՐՈՀԱՐՎԵՍՏ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Վահե Արթուրի Խաչատրյանի 13.07.2022թ. դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. «ԱԳՐՈՀԱՐՎԵՍՏ» ՍՊԸ-Ինսեփականության իրավունքով պատկանող /հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20082021-04-0027 վկայական, տրված՝ 20.08.2021թ/ 04-022-0111-0002 կադաստրային ծածկագրով 157.64 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության հողերից 6.4286 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության, արոտավայր գործառնական նշանակության հողամասը փոխադրել «ջրային հողեր» նպատակայինև գործառնական նշանակության հողերիկատեգորիա ոռոգման համար 97.000 *մ3* մետր խորանարդ ծավալով ջրավազան կառուցելու նպատակով:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքային հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքային հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 77-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 07-ԻՆ ԹԻՎ 28-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով,հիմք ընդունելով Ռոբերտ Արամայիսի Գալուստյանի և Ալեն Ռոբերտի Գալուստյանի դիմումը՝

1,Հայաստանի Հանրապետության Բաղրամյան համայնքի ավագանու 2022 թ մարտի 07-ի <<Ալեգրուպ>>ՍՊԸ ին սեփականության իրավունքով պատկանող Շենիկ գյուղում գտնվող հողի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին թիվ 28-Ա որոշման մեջ թոփոխություն կատարելու մասին

1) Որոշման վերնագրից   և նախաբանից հանել <<Ալեգրուպ>> ՍՊԸ բառերը:

2) Որոշման 1-ին կետում <<<<Ալեգրուպ>>ՍՊԸ-ի>> փոխարինել <<Ալեն Ռոբերտի Գալուստյանի 1/2 և Ռոբերտ Արամայիսի Գալուստյանի 1/2 մասով >> բառերով և 56,2247 հա -ի փոխարեն կարդալ 57,2902 հա:

3) Որոշման 2-րդ մասում քաղաքացի <<<< Ալեգրուպ>> ՍՊԸ-ին >> բառերը փոխարինել <<քաղաքացիներ Ալեն և Ռոբերտ Գալուստյաններ>> բառերով :

2. Սույն որո/ումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15          Դեմ -0     Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 78-Ա

## ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1.Համայնքի սեփականություն հանդիսացող

ա) 3.05636 հա գյուղատնտեսական նշանակության այլ հող

բ) 2.0794 հա գյուղատնտեսական նշանակության այլ հող

գ) 0.75113 հա գյուղատնտեսական նշանակության այլ հող

դ) 1.85395 հա գյուղատնտեսական նշանակության այլ հող

աճուրդային եղանակով օտարել:

2.Լոտի չափը սահմանել 0,01հա-20.0 հա:

3 Լոտերի մեկնարկային գինը սահմանել

Լոտ 1 Ծածկագիր 04-029-0106-0112 , 3,05636 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը՝ 309456 ՀՀ դրամ:

Լոտ 2 Ծածկագիր 04-029-0106-0114 , 2,0794 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը 210 540 ՀՀդրամ:

Լոտ 3 Ծածկագիր 04-029-0106-0101 , 0,75113 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը՝ 76 100 ՀՀդրամ:

Լոտ 4 Ծածկագիր 04-029-0106-0113 ,  1,85395 հա գյուղատնտեսական նշանակության  այլ հողատեսք, մեկնարկային գինը`  187 800  ՀՀդրամ:

4.Առաջարկել համայնքի ղեկավարին իրականացնել սույնորոշումից բխող իրավական գործողությունները:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող  օրը:

Կողմ -15  Դեմ -0  Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**  **ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ**